

Ե Ր Ե Վ Ա Ն Ի Պ Ե Տ Ա Կ Ա Ն Հ Ա Մ Ա Լ Ս Ա Ր Ա Ն
Ի Ր Ա Վ Ա Գ Ի Տ ՈՒԹ Յ Ա Ն Ֆ Ա Կ ՈՒ Լ Տ Ե Տ

Ք Ր Ե Ա Կ Ա Ն Դ Ա Տ Ա Վ Ա Ր ՈՒԹ Յ Ա Ն Ե Վ
Կ Ր Ի Մ Ի Ն Ա Լ Ի Ս Տ Ի Կ Ա Յ Ի Ա Ս Բ Ի Ո Ն

Հաստատվել է ԵՊՀ խորհրդի
«----» -----2013թ.
թիվ-----որոշմամբ

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Ց Ի Ծ Ր Ա Գ Ի Ր

Դասընթաց՝ 1902/B01 «Քրեական դատավարություն - 1»

Որակավորման
աստիճան՝

բակալավրի կրթական ծրագիր

(«Քրեական իրավունք և դատավարություն»
բակալավրի ծրագիր)

Կազմեցին՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Գ.Ղազինյանը, իրավ գիտ.
դոկտոր, պրոֆեսոր Ս.Դիլբանդյանը

ԵՊՀ հրատարակչություն
Երևան 2013

«Քրեական դատավարություն-1»

Ծրագրի ներածություն

«Քրեական դատավարություն-1» (4 կրեդիտ)

Շաբաթական 4 ժամ (40 ժամ դասախոսություն, 8 ժամ սեմինար, 16 ժամ գործնական, 56 ժամ
ինքնուրույն աշխատանք), 5-րդ կիսամյակ, առանց եզրափակիչ գնահատման դասընթաց

Նպատակը.

Դասընթացի նպատակն է ուսանողին ծանոթացնել քրեական դատավարության
ընդհանուր մասի ինստիտուտներին, որոնք կարգավորում են ամբողջ քրեադատավարական
գործունեության համար նշանակություն ունեցող ընդհանուր հարաբերությունները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը.

- 1) կհմանա քրեական դատավարության էությունը և նշանակությունը, քրեական դատավարության խնդիրները, համակարգը, հիմնական հասկացությունները,
- 2) կհասկանա արդարադատության իրականացման սկզբունքները, քրեական դատավարության սուբյեկտների իրավական վիճակը, նրանց կողմից իրականացվող գործառույթները,
- 3) ձեռք կբերի գիտելիքներ քրեական դատավարությունում ապացույցների և ապացուցման մասին,
- 4) կհասկանա քրեական դատավարական հարկադրանքի միջոցների տեսակները և դրանց կիրառման կարգը:
- 5) կհմանա մինչդատական վարույթի էությունը, նշանակությունը և դատավարական կարգը, նախքննությունը որպես մինչդատական վարույթի ձև, նախաքննության կառուցվածքը, հետաքննության էությունը և նշանակությունը, նախաքննության իրականացման ձևերը և դրանց առանձնահատկությունները,

Ստուգման անցկացման ձևը և գնահատման չափանիշները

Նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 9 միավոր: Ստուգման ձևերն են.

1-ին ստուգում. Գրավոր` խնդիր: Միավորների քայլը 0,5 է:

2-րդ ստուգում. Գրավոր` խնդիր: Միավորների քայլը 0,5 է:

Դասընթացի բովանդակությունը

ԹԵՄԱ 1.

Քրեական դատավարության էությունը և հիմնական հասկացությունները

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Քրեական դատավարությունը` որպես գործողությունների և հարաբերությունների համակարգ: Քրեական դատավարության բնութագրիչ գծերը: Քրեական դատավարության օրենսգրքի նպատակը: Քրեական դատավարությունում հանրային և մասնավոր շահերի հարաբերակցությունը:

2. Քրեական դատավարության համակարգը և փուլերի ընդհանուր բնութագիրը: Քրեական դատավարության իրավունքը որպես իրավական կարգավորման ինքնուրույն ճյուղ: Քրեական դատավարության իրավունքի կարգավորման առարկան և մեթոդը:

3. Քրեական դատավարական իրավահարաբերություններ: Քրեական դատավարությունում իշխանական և դիսպոզիտիվության մեթոդների կիրառման հարաբերակցությունը:

4. Քրեական դատավարության գործառույթների հասկացությունը և տեսակները: Քրեական հետապնդման, պաշտպանության և գործի լուծման գործառույթների կիրառումը քրեական դատավարության տարբեր փուլերում:

5. Քրեական դատավարական ձևի հասկացությունը, նշանակությունը և որակական հատկանիշները: Քրեադատավարական ձևի միասնականությունը և տարբերացումը:

6. Քրեական դատավարական երաշխիքների հասկացությունը և նշանակությունը: Քրեադատավարական երաշխիքների բովանդակությունը:

7. Քրեական դատավարությունը որպես գիտություն և ուսումնական դասընթաց: «Քրեական դատավարություն-1» դասընթացի համակարգը:

Չարցեր 1-7 – Անցկացվում է ներածական դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Չարցեր 1, 2, 4, 5 սեմինար, 3, 7 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ., Գ. Ղազինյան Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան, 2001, Ս. Դիլբանդյան Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում, Երևան, 2011թ.):

ԹԵՄԱ 2.

Քրեական դատավարության իրավունքի աղբյուրները

(1 ժամ դասախոսություն)

1.Քրեական դատավարության իրավունքի աղբյուրները: ՀՀ Սահմանադրությունը և ՀՀ միջազգային պայմանագրերը քրեական գործերով վարույթը կարգավորող իրավական ակտերի համակարգում:

2. Քրեական դատավարական օրենքը որպես քրեական դատավարական իրավունքի հիմնական աղբյուր: ՀՀ քրեական դատավարության օրենսդրության զարգացման հիմնական փուլերը: Քրեական դատավարական նորմի հասկացությունը, կառուցվածքը և տեսակները:

3. Քրեական դատավարական օրենքի ներգործությունը ժամանակի և տարածության մեջ, ինչպես նաև ըստ անձանց շրջանակների:

4. Նախադեպը քրեական դատավարության իրավունքի աղբյուրների համակարգում: ՀՀ Սահմանադրական դատարանի», Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների դերը քրեական վարույթի կարգավորման գործում:

Չարցեր 1-4 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Չարցեր 1-4 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ.):

ԹԵՄԱ 3.

Քրեական դատավարության զարգացման պատմությունը Հայաստանում

(1 ժամ դասախոսություն)

1. Քրեական դատավարության պատմական ձևերը: Մեղադրական, հետախուզական (ինկվիզիցիոն), մրցակցային և խառը դատավարության ձևերի բնութագրիչ գծերը:

2. Քրեական դատավարությունը Հին և Վաղ միջնադարյան Հայաստանում (մ.թ.ա. 1 հազ. - մ.թ. 9-րդ դ.):

3. Քրեական դատավարությունը Հայաստանում զարգացած միջնադարում (10-13-րդ դ.):

4. Քրեական դատավարությունը Հայաստանում անկախ պետականության կորստի և ֆեոդալական (ավատատիրական) հարաբերությունների լճացման պայմաններում (14-19-րդ դ.):

5. Քրեական դատավարությունը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920թթ.):

6. Խորհրդային Հայաստանի քրեական դատավարության ստեղծումը և զարգացումը (1920-1990թթ.):

7. Դատաիրավական բարեփոխումները Հայաստանի երրորդ Հանրապետությունում: 2013 թվականի քրեական դատավարության օրենսգրքի բնութագիրը:

Հարցեր 1-7 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-7 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ., Գ. Ղազինյան Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան, 2001թ.):

ԹԵՄԱ 4.

Քրեական վարույթի սկզբունքները

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական)

1. Քրեական դատավարության սկզբունքների հասկացությունը և նշանակությունը: Քրեական դատավարության սկզբունքների համակարգը և դասակարգումը:

2. Հանրայնության սկզբունքի էությունը և նշանակությունը: Հանրայնությունը որպես հանրային և մասնավոր շահերի հավասարակշռված պաշտպանության միջոց:

3. Բոլորի հավասարությունը օրենքի առջև սկզբունքի հասկացությունը և բովանդակությունը:

4. Անմեղության կանխավարկածի հասկացությունը և բովանդակությունը:

5. Անձի ազատությունը և անձնական անձեռնմխելիությունը:

6. Իրավաբանական օգնության ապահովումը:

7. Մեղադրյալի պաշտպանության ապահովումը:

8. Կողմերի հավասարությունը և մրցակցությունը քրեական դատավարությունում:

9. Պատշաճ ապացուցման հասկացությունը և բովանդակությունը:

10. Դատական պաշտպանության ապահովումը:

11. Վարույթի ողջամետ ժամկետի հասկացությունը և բովանդակությունը:

12. Կրկին դատվելու անթույլատրելիությունը:

13. Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը: Քրեական դատավարության բարոյական հիմքերը, դրանց արտացոլումը քրեական դատավարական իրավունքի նորմերում և ինստիտուտներում:

14. Վարույթի լեզուն:

15. Դատական վարույթի հրապարակայնությունը:

16. Ոչ իրավաչափ վարքագծի արգելքի հասկացությունը և բովանդակությունը:

Հարցեր 1-16 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 2, 4, 5, 8, 9 գործնական՝ խնդիրների լուծում, իրավիճակների վերլուծություն, 1, 3, 6, 7, 10 -16 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ., Գ. Ղազինյան Քրեական դատավարության պատմական և արդի հիմնախնդիրները Հայաստանում, Երևան, 2001թ., Եվրոպական դատարանի նախադեպեր.

1. Դատարանի կամ դատական քննության իրավունք ա/ Golder v United Kingdom (1975)

բ/ Dubinskaya v Russia (2006), գ/ Albert and Le Compte v Belgium (1983)

դ/ Ashingdane v United Kingdom (1985), է/ Monnell and Morris v United Kingdom (1987), զ/ Marpa

Zeeland B.V. and Metal Welding B.V. v Netherlands (2004), Ի/ Airey v Ireland (1979), լ/ Bertuzzi v

France

(2003):

2. Անկախ և անկողմնակալ դատարան

ա/ Buzescu v Romania (2005), բ/ Van de Hurk v Netherlands (1994), գ/ Lavents v Latvia (2002), դ/ Posokhov v Russia (2003), ե/ Zlinsat Spol. S.R.O. v Bulgaria (2006), զ/ Clarke v United Kingdom (dec.) (2005), ի/ Belukha v Ukraine (2006)

3. Մրցակցություն և կողմերի հավասարություն

ա/ Brandstetter v Austria (1991), բ/ Barbera, Messegue and Jabardo v Spain (1988), գ/ Bricmont v Belgium (1989), դ/ Rowe and Davis v United Kingdom (2000), ե/ Edwards and Lewis v United Kingdom (2004), զ/ Neumeister v Austria (1968), ի/ Wynen and Centre Hospitalier Interrégional Edith-Cavell v Belgium (2002), *Մ. Մարգարյանի* վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0081/01/11:

4. Հրապարակայնություն

ա/ B. and P. v United Kingdom (2001), բ/ Riepan v Austria (2000), գ/ Pretto and Others v Italy (1983), դ/ Martinie v France (2006)

5. Գործի քննությունը ողջամիտ ժամկետում

ա/ H. v France (1989), բ/ Milasi v Italy (1987), գ/ Bottazzi v Italy (1999), դ/ Baggetta v Italy (1987), ե/ Tomasic v Croatia (2006), զ/ Vaivada v Lithuania (dec.)(2005)

6. Անմեղության կախավարկած

ա/ Ringvold v Norway (2003), բ/ Minelli v Switzerland (1983), դ/ Geerings v Netherlands (2007), ե/ Allenet de Ribemont v France (1995)

7. Պաշտպանության իրավունք

ա/ Krempovskij v Lithuania (dec.)(1999), բ/ Ocalan v Turkey (2003), գ/ G.B. v France (2001), դ/ Jespers v Belgium (1981), ե/ Berlinski v Poland (2002)
զ/ Zhelezov v Russia (dec.)(2002):

8. Բոլորի հավասարությունը օրենքի և դատարանի առջև

ա/ L. Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0093/11/11,

ԹԵՄԱ 5.

Քրեական վարույթին ներգրավված մարմինները և անձինք

(4 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար, 1 ժամ գործնական)

1. Քրեական վարույթին ներգրավված սուբյեկտների հասկացությունը և դասակարգումը:

2. Դատարան (դատավոր): Դատարանի կազմը և իրավասությունը: Նախագահողը և նրա լիազորությունները: Պահեստային դատավորի կարգավիճակը:

3. Վարույթի հանրային մասնակիցների դատավարական վիճակի ընդհանուր բնութագիրը: Վարույթի հանրային մասնակիցների ինքնուրույնությունը և պատասխանատվությունը: Վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները:

ա) Դատախազ: Նրա լիազորությունները մինչդատական և դատական վարույթներում:

բ) Քննչական մարմնի ղեկավարի դատավարական վիճակը:

գ) Քննիչ: Նրա լիազորությունները և դատավարական ինքնուրույնությունը:

զ) Հետաքննության մարմնի դատավարական վիճակի առանձնահատկությունները: Հետաքննության մարմնի պետի և հետաքննիչի լիազորությունները:

4. Վարույթի մասնավոր մասնակիցների ընդհանուր բնութագիրը:

ա) Սեղադրյալ: Նրա իրավունքները և պարտականությունները: Սեղադրյալի օրինական ներկայացուցչի դատավարական վիճակը:

բ) Պաշտպանի հասկացությունը: Պաշտպանի դատավարական վիճակը: Պաշտպանի հրա-

վիրելը, նշանակելը, փոխարինելը: Պաշտպանի պարտադիր մասնակցությունը: Պաշտպանից հրաժարվելը: Պաշտպանի մասնակցության դադարեցումը:

գ) Տուժող: Նրա իրավունքները և պարտականությունները: Սահացած տուժողի կամ տուժող ճանաչելու ենթակա անձի փոխարեն տուժող ճանաչելը, նրա դատավարական վիճակի առանձնահատկությունները: Տուժողի գույքային և բարոյական իրավունքների պաշտպանությունը: Տուժողը՝ որպես մասնավոր մեղադրող: Տուժողի օրինական ներկայացուցչի և լիազոր ներկայացուցչի դատավարական վիճակը:

դ) Գույքային պատասխանող: Նրա իրավունքները և պարտականությունները: Գույքային պատասխանողի լիազոր ներկայացուցչի դատավարական վիճակը:

5. Քրեական վարույթին օժանդակող անձանց ընդհանուր բնութագիրը (ընթերակա, դատական նիստի քարտուղար, թարգմանիչ, մասնագետ, փորձագետ, վկա): Նրանց իրավունքները և պարտականությունները:

6. Վարույթի մասնակցությունը բացառող հանգամանքները: Բացարկման ենթակա սուբյեկտները: Ինքնաբացարկի, բացարկի կամ վարույթին մասնակցելուց ազատելու հարցի լուծումը:

Չարդեր 1-6 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Չարդեր 1 սեմինար, 2-4, գործնական՝ խնդիրների լուծում, 5-6 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ., Ղուկասյան Հ. Պաշտպանի դատավարական վիճակը նախնական քննության փուլում, Երևան 2001թ., Է. Եղիմյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0008/11/10, Ս. Չակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/009/12/10, Ս. Սահակյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0059/11/10/26/):

ԹԵՄԱ 6

Քրեական վարույթ ներգրաված անձանց հատուկ պաշտպանությունը

(1 ժամ դասախոսություն)

1.Քրեական դատավարությանը մասնակցող անձանց պաշտպանության ինստիտուտի էությունը և նշանակությունը քրեական դատավարությունում: Հատուկ պաշտպանության միջոց կիրառելու հիմքը և կարգը:

2. Հատուկ պաշտպանության միջոցները և դրանց բնութագիրը:

3. Դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

4. Պաշտպանվող անձի իրավունքները և պարտականությունները:

Չարդեր 1-4 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Չարդեր 1-4 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ., Ս. Դիլբանդյան Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում, Երևան, 2011թ., 3 Սահակյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/0212/01/10):

ԹԵՄԱ 7. Ապացույցները քրեական դատավարությունում
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար, 1 ժամ գործնական)

1. Ապացույցների հասկացությունը նշանակությունը քրեական դատավարությունում: Ապացույցների թույլատրելիությունը և վերաբերելիությունը: Ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները: Ապացույցների դասակարգումը և դրա գործնական նշանակությունը:

2. Ձերբակալված անձի և մեղադրյալի ցուցմունքները: Ձերբակալված անձի և մեղադրյալի ցուցմունքների հասկացությունը, առարկան և նշանակությունը: Ձերբակալված անձի և մեղադրյալի ցուցմունքների գնահատման առանձնահատկությունները:

3. Վկայի և տուժողի ցուցմունքները: Վկայի և տուժողի ցուցմունքների առարկան և նշանակությունը: Հանգամանքներ, որոնք բացառում են անձին՝ որպես վկա հարցաքննելը: Վկայի և տուժողի ցուցմունքների գնահատման առանձնահատկությունները:

4. Փորձագետի եզրակացությունը, կարծիքը և ցուցմունքը: Փորձագետի «եզրակացության», «կարծիքի» և «ցուցմունքի» որպես ապացույցի ինքնուրույն տեսակների առանձնահատկությունները: Փորձագետի եզրակացության, կարծիքի և ցուցմունքի առարկան, նշանակությունը և բովանդակությունը: Փորձագետի եզրակացության գնահատման առանձնահատկությունները:

5. Իրեղեն ապացույցները: Իրեղեն ապացույցների հասկացությունը, նշանակությունը տեսակները: Դրանց դատավարական ձևակերպումը: Իրեղեն ապացույցների գնահատման առանձնահատկությունները: Իրեղեն ապացույցների պահպանման կարգը և ժամկետները: Իրեղեն ապացույցների տնօրինումը:

6. Ապացուցողական և վարույթային գործողությունների արձանագրությունները և դրանց տեսակները: Դրանց գնահատման առանձնահատկությունները:

7. Արտավարույթային փաստաթղթերը՝ որպես ապացույցի ինքնուրույն տեսակ: Արտավարույթային փաստաթղթերի հասկացությունը, նշանակությունը և տեսակները: Դրանց գնահատման առանձնահատկությունները:

Հարցեր 1-7 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1, սեմինար 2-7 գործնական (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ., Ա. Առաքելյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0580/06/09, Կ. Սարուխանյանի վերաբերյալ որոշում, ԼԴ/03/01/09, Հ. Հակոբյանի վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0128/01/09,):

ԹԵՄԱ 8. Ապացուցումը քրեական դատավարությունում
(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)

1. Ապացույցների տեսությունը և ապացուցողական իրավունքը քրեական դատավարությունում: Դրանց նշանակությունը քրեական վարույթի խնդիրների իրականացման համար:

2. Ապացուցման հասկացությունը և նպատակը: Նրա ճանաչողական և հավաստողական կողմերը: Ապացուցման տարրերը՝ ա) ապացուցների հավաքման հասկացությունը, եղանակները և փուլերը, բ) ապացույցների ստուգման հասկացությունը և եղանակները, գ) ապացույցների գնահատման հասկացությունը և եղանակները, դ) ապացույցների օգտագործումը որպես ապացուցման գործընթացի տարր:

3. Ապացուցման սուբյեկտների հասկացությունը և տեսակները: Ապացուցման գործընթացին քրեական վարույթի տարբեր մասնակիցների մասնակցությունը և նրանց լիազարությունները: Ապացուցման պարտականության ընդհանուր բնութագիրը:

4. Քրեական վարույթի ընթացքում ապացուցման առարկան և սահմանները: Ապացուցման առարկայի կառուցվածքը: Փաստերի իրավական կանխավարկածի նշանակությունը քրեական դատավարությունում:

Չարդեր 1-4 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Չարդեր 1 սեմինար, 2-4 գործնական խնդիրների լուծում– (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ., 4. *Սարուխանյանի* վերաբերյալ որոշում, ԼԴ/0301/01/09, Վ. *Աղաջանյանի* վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0345/01/09, Ս. *Գրիգորյանի* վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0281/01/10, Ս. Սաքանյանի վերաբերյալ որոշում, ԵԷԴ/0058/01/10):

ԹԵՄԱ 9.

Չարկադրանքի միջոցները

(4 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)

1. Չարկադրանքի միջոցների հասկացությունը, տեսակները և դասակարգումը:

2. Ձերբակալում. հասկացությունը, հիմքերը, ժամկետները և դատավարական կարգը: Ձերբակալման տեսակները: Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալված անձի իրավունքները, պարտականությունները, դրանց իրականացման պայմաններն ու երաշխիքները: Ձերբակալվածին ազատելը:

3. Խափանման միջոցներ. հասկացությունը, կիրառման հիմքերը, տեսակները և դատավարական կարգը: Խափանման միջոցների կիրառման իրավաչափությունը: Հսկողությունը և վերահսկողությունը խափանման միջոցների կիրառման նկատմամբ:

4. Կալանքը: Կալանքի կիրառման հիմքերը և դատավարական կարգը: Կալանքի կիրառման իրավաչափության պայմանները: Կալանքի ժամկետները: Մեղադրյալին կալանքից ազատելու հիմքերը և կարգը:

5. Այլընտրանքային խափանման միջոցների հասկացությունը և տեսակները:

1) Տնային կալանքի հասկացությունը և բովանդակությունը:

2) Վարչական հսկողության հասկացությունը և նշանակությունը:

3) Գրավի հասկացությունը, հիմքերը և կիրառման կարգը:

4) Պաշտոնավարության կասեցման հասկացությունը, հիմքերը և կիրառման կարգը:

5) Բացակայելու արգելքի հասկացությունը, հիմքերը, պայմանները և կիրառման կարգը:

6) Երաշխավորության հասկացությունը, հիմքերը, պայմանները և կիրառման կարգը:

7) Դաստիարակչական հսկողության հասկացությունը, հիմքերը և կիրառման կարգը:

8) Ձինվորական հասկացությունը, հիմքերը և կիրառման կարգը:

6. Չարկադրանքի այլ միջոցների հասկացությունը և կիրառման հիմքերը: Չարկադրանքի այլ միջոցների տեսակները՝

1) Գույքի արգելադրումը: Գույքի արգելադրման հասկացությունը, հիմքերը, պայմանները և դատավարական կարգը:

2) Հոգեկան հիվանդություն կամ հոգեկան խանգարում ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցների հասկացությունը, տեսակները, կիրառման հիմքերը և կարգը:

3) Դատավարական սանկցիաների հասկացությունը, տեսակները, կիրառման հիմքերը և կարգը:

Չարցեր 1-5 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Չարցեր 1 սեմինար, 2-5 գործնական խնդիրների լուծում, 6 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ. *Ա. Երեմյանի* վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0513/06/10, *Ա. Առաքելյանի* վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0580/06/09, *Վ. Գևորգյանի* վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0678/06/10, *Յ. Աղեկյանի* վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0744/06/10/56/ *Դ. Ալիխանյանի* վերաբերյալ որոշում, ԵԱԲԴ/0138/06/12):

Թեմա 10

Միջնորդությունները և բողոքները

(1 ժամ դասախոսություն)

1. Միջնորդությունները և բողոքները: Միջնորդությունների հարուցումը, ժամկետները և լուծումը: Վարույթի մասնակից ճանաչելու միջնորդությունները:
2. Վարույթն իրականացնող մարմինների վարույթային ակտերի բողոքարկումը, ժամկետները և լուծումը:

Չարցեր 1-2 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Չարցեր 1-2 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ.):

ԹԵՄԱ 11.

Գույքային հայցը, վարձատրությունը, ծախսերը և դրանց հատուցումը

(1 ժամ դասախոսություն)

1. Գույքային հայցի նշանակությունը և իրավական բնույթը քրեական դատավարությունում: 2. Քրեական վարույթում գույքային հայցի առարկան և դրա փոխհատուցման ապահովումը: 3. Գույքային հայցի հարուցումը և դատարանի կողմից կայացվող որոշումները: Գույքային հայցից հրաժարվելը: Գույքային վնասի հատուցումը դատարանի նախաձեռնությամբ: 4. Պաշտպանի, թարգմանչի, փորձագետի վարձատրությունը: 5. Քրեական վարույթին մասնակցող անձանց կրած ծախսերի հատուցումը: 6. Դատական ծախսերի հասկացությունը, տեսակները և գանձման դատավարական կարգը:

2. Փաստաբանի, փորձագետի և թարգմանչի վարձատրությունը: Վարույթին ներգավված անձանց ծախսերը և դրանց հատուցումը:

Չարցեր 1-2 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Չարցեր 1-2 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ., *Յ. Հարությունյանի* վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0151/01/09, *Ա. Ստեփանյանի* վերաբերյալ որոշում, ԼԴ/0327/01/10):

ԹԵՄԱ 12.

Գաղտնիության պահպանումը և դատավարական ժամկետները
(1 ժամ դասախոսություն)

1. Գաղտնիության պահպանման հասկացությունը և նշանակությունը քրեական դատավարությունում: 2. Անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: 3. Պետական, բանկային, նոտարական, ծառայողական և օրենքով նախատեսված այլ գաղտնիքի պահպանումը:

2. Դատավարական ժամկետների հասկացությունը և նշանակությունը քրեական դատավարությունում: Դատավարական ժամկետների հաշվումը և բացթողնված ժամկետների վերականգնումը:

Հարցեր 1-2 – Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-2 – Ինքնուրույն աշխատանք – հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն, Ընդհանուր մաս, Երևան, ԵՊՀ, 2006թ., է. Եղիմյանի վերաբերյալ որոշում, ՇՊ/0008/11/10):

Թեմա 13. Քրեական վարույթ նախաձեռները

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար, 1 ժամ գործնական)

1. Քրեական վարույթ նախաձեռները հասկացությունը և նշանակությունը: Քրեական վարույթ նախաձեռները խնդիրները: Քրեական վարույթ նախաձեռները մասնակիցները և նրանց լիազորությունները:

2. Քրեական վարույթ նախաձեռները առիթների հասկացությունը և տեսակները: Քրեական վարույթ նախաձեռները հիմքերը:

3. Հանցագործության մասին հաղորդումների ընդունման և գրանցման կարգը: Քրեական վարույթ նախաձեռները դատավարական կարգը: Քրեական վարույթ նախաձեռները ընթացքում կազմվող դատավարական փաստաթղթերը, դրանց բնույթը և նշանակությունը: Քրեական վարույթ նախաձեռները ձևով և բովանդակությամբ: Քրեական վարույթ նախաձեռները օրինականության և հիմնավորվածության նկատմամբ:

4. Քրեական վարույթի կարճման հասկացությունը, հիմքերը և կարգը: Քրեական վարույթը կարճելու մասին որոշումը և դրա բողոքարկման կարգը:

Հարցեր 1-4- Անցկացվում է ներածական դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-2 սեմինար, 3-4 գործնական՝ խնդիրների լուծում, դատավարական փաստաթղթերի կազմում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան, ԵՊՀ, 2010թ., Ա. Գոյանի վերաբերյալ որոշում, ԵԱՔԴ/0049/01/09, Լ. Բաբայանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0093/11/11):

Թեմա 14. Նախաքննությունը և նրա ձևերը

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Նախաքննությունը քրեական դատավարության փուլերի համակարգում: Նախաքննության հասկացությունը և էությունը: Նախաքննության փոխհարբերակցությունը դատավարության այլ փուլերի հետ:

2. Նախաքննության ձևերը՝ ընհանուր և պարզեցված վարույթները, դրանց բնութագրական գծերը:

3. Նախաքննության մարմինների համակարգը: Նախաքննության կառուցվածքը:

Հարցեր 1-3- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-2 սեմինար, 3 – Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան, ԵՊՀ. 2010թ.):

Թեմա 15. Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանները

(2 ժամ դասախոսություն, 1 ժամ սեմինար)

1. Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանների հասկացությունը և էությունը: Մինչդատական վարույթի ընդհանուր պայմանների տեսակները, դրանց փոխհարաբերակցությունը քրեական դատավարության սկզբունքների հետ:

2. Քննչական ենթակայության հասկացությունը և նշանակությունը: Քննչական ենթակայության տեսակները:

3. Քրեական վարույթների միացման և անջատման հասկացությունը, հիմքերը և պայմանները: Ժամկետների հաշվարկումը՝ քրեական վարույթները միացնելու և անջատելու դեպքում:

4. Նախաքննության կատարումը քննչական խմբի կողմից: Քննչական խմբի ղեկավարի լիազորությունները:

5. Նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը: Նախաքննության ավարտը և դրա տեսակները:

6. Հետաքննության հասկացությունը և նշանակությունը: Հետաքննության բնութագրիչ գծերը: Հետաքննության և նախաքննության փոխհարաբերակցությունը: Հետաքննություն կատարելու հիմքերը: Հետաքննության մարմինների կողմից գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը: Հետաքննության սկիզբը և ավարտը:

Հարցեր 1-6- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1, 6 սեմինար, 2-5 Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան, ԵՊՀ. 2010թ.):

Թեմա 16. Հանրային քրեական հետապնդումը

(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

1. Քրեական հետապնդման հասկացությունը և նշանակությունը: Քրեական հետապնդման փոխհարաբերակցությունը քրեական դատավարության մյուս գործառույթների հետ: Քրեական հետապնդման սուբյեկտները և նրանց լիազորությունները:

2. Հանրային քրեական հետապնդման բնութագրական գծերը: Հանրային քրեական հետապնդում հարուցելու բովանդակությունը: Հանրային քրեական հետապնդում իրականացնող մարմինները և դրանց լիազորությունները: Հանրային քրեական հետապնդման ժամկետները և դրանց երկարացնելու դատավարական կարգը:

3. Անձին որպես մեղադրյալ ներգրավելը՝ որպես հանրային քրեական հետապնդման հարուցման ձև: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հասկացությունը և նշանակությունը: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքերը: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման բովանդակությունը և ձևը: Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքերի հարաբերակցությունը՝ անձին ձերբակալելու, մեղադրական եզրակացություն կազմելու և դատավճիռ կայացնելու հիմքերի հետ: Հիմնավոր, ողջամիտ կասկածը՝ որպես դատավարական կատեգորիաներ:

4. Անձին մեղադրանք ներկայացնելու հասկացությունը, նշանակությունը և կարգը: Մեղադրյալին մեղադրանքի փաստական հանգամանքների և իրավական գնահատականի, ինչպես նաև օրենքով նախատեսված մեղադրյալի իրավունքների և պարտականությունների պարզաբանումը: Պաշտպանի մասնակցության ապահովումը: Մեղադրյալի հարցաքննությունը: Հարցաքննության առարկան, կարգը և դատավարական ամրագրումը: Մեղադրյալի իրավունքները ցուցմունք տալիս:

Նախկինում ներկայացված մեղադրանքի փոփոխման և լրացման հիմքերը և դատավարական կարգը:

5. Հայեցողական քրեական հետապնդման հասկացությունը, նշանակությունը և պայմանները: Հայեցողական քրեական հետապնդման հիման վրա՝ քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշումը և դրա բողոքարկման կարգը:

Հարցեր 1-5- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-6 գործնական՝ խնդիրների լուծում, դատավարական փաստաթղթերի կազմում, (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան, ԵՊՀ. 2010թ., Գ. Ճաղարյան և այլոց վերաբերյալ ԵՇԴ/002/01/11):

Թեմա 17. Հանրային քրեական հետապնդման ժամկետի կասեցումը

(1 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական)

1. Հանրային քրեական հետապնդման ժամկետի կասեցման հասկացությունը և նշանակությունը: Հանրային քրեական հետապնդման ժամկետի կասեցման հիմքերը և պայմանները:

2. Հանրային քրեական հետապնդման ժամկետի կասեցման դատավարական կարգը: Հանրային քրեական հետապնդման ժամկետի կասեցումը մի քանի մեղադրյալների առկայության դեպքում:

3. Քրեական հետապնդման կասեցված ժամկետը վերսկսելը: Քրեական հետապնդման կասեցված ժամկետը վերսկսելու հիմքերը, կարգը և ժամկետների վերահաշվարկը:

4. Հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու մասին որոշման բողոքարկումը:

Հարցեր 1-4- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-4 – Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա

ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան, ԵՊՀ. 2010թ.):

Թեմա 17. Հանրային քրեական հետապնդում չհարուցելը կամ այն դադարեցնելը

(1 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)

1. Քրեական հետապնդումը բացառող հանգամանքների հասկացությունը և դասակարգումը:

2. Արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը բացառող հանգամանքները և դրանց տեսակները:

3. Ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը բացառող հանգամանքները և դրանց տեսակները:

4. Քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու դատավարական կարգը: Քրեական հետապնդում չհարուցելու կամ այն դադարեցնելու մասին որոշումը. դրա ձևը, բովանդակությունը և բողոքարկումը:

5. Չհարուցված կամ դադարեցված քրեական հետապնդումը նորոգելու հիմքերը և դատավարական կարգը:

6. Քրեական վարույթի կարճման հիմքերի և քրեական հետապնդումը բացառող հանգամանքների փոխհարաբերակցությունը:

Հարցեր 1-6- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-6 գործնական աշխատանք՝ խնդիրների լուծում և դատավարական փաստաթղթերի կազմում, – Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան, ԵՊՀ. 2010թ., Լ. Զարյանի վերաբերյալ որոշում, ԵԿԴ/0081/11/09, Հ. Մելքոնյանի վերաբերյալ որոշում, ԵԱԴԴ/0009/11/10):

Թեմա 18. Նախաքննության ավարտը

(1 ժամ դասախոսություն)

1. Մեղադրական եզրակացություն կազմելով նախաքննության ավարտման հիմքերը և կարգը:

2. Մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ քրեական գործին ծանոթանալու հասկացությունը, նշանակությունը և կարգը: Դատավարության մասնակիցներին՝ գործի նյութերին ծանոթանալու իրենց դատավարական իրավունքների պարզաբանումը:

3. Մեղադրյալին նախաքննության ավարտման մասին տեղեկացնելը և նրա իրավունքները պարզաբանելը: Պաշտպանի մասնակցությունը նախաքննության ավարտմանը և նրա իրավունքները: Մեղադրյալին և պաշտպանին քրեական գործի նյութերին ծանոթացնելը:

4. Քրեական գործին ծանոթացնելու արձանագրության կազմումը: Քրեական գործին ծանոթանալու ընթացքում՝ դատավարության մասնակիցների կողմից ներկայացված միջնորդությունների քննարկումը և լուծումը:

5. Մեղադրական եզրակացությունը: Մեղադրական եզրակացության հասկացությունը և նշանակությունը: Մեղադրական եզրակացության փոխհարաբերակցությունը անձին որպես մեղադրյալ ներգարվելու որոշման հետ: Մեղադրական եզրակացության բովանդակությունը և ձևը: Մեղադրական եզրակացությանը կցվող նյութերը:

6. Մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործով հսկող դատախազի լուծմանը ենթակա հարցերը: Հսկող դատախազի գործողությունները և որոշումները մեղադրական եզրակացությամբ ստացված քրեական գործով: Մեղադրական եզրակացության պատճեն հանձնելը և շահագրգիռ անձանց գործը դատարան ուղարկելու մասին տեղեկացնելը:

Հարցեր 1-6- Անցկացվում է դասախոսություն՝ խմբային քննարկման միջոցով:

Հարցեր 1-6- Ինքնուրույն աշխատանք- հանձնարարված գրականության հիման վրա ուսանողները ծանոթանում են թեմային, այնուհետև հաջորդ դասախոսությունների ընթացքում անցկացվում է քննարկում (պահանջվող նյութը՝ ՀՀ քրեական դատավարություն: Հատուկ մաս, Երևան, ԵՊՀ. 2010թ., Գ. Ճադարյան և այլոց վերաբերյալ ԵՇԴ/002/01/11):

Թեմա 19. Պարզեցված նախաքննության առանձնահատկությունները

(1 ժամ դասախոսություն, 1 ժամ գործնական)

